ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ ԴՎԻՆՈՒՄ

Պրոֆ. Կ. Դ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Ինչպես հայտնի դարձավ պեղումների ընթացքում, Դվինի բլուրի վրա գոյություն է ունեցել մի մեծ բնակավայր, որի հնությունը հասնում է մինչև պղնձի դարի սկիզբը, մ. թ. ա. V հազարամյակը։ Այդ հին բնակավայրի հողաշերտի նստվածքը Դվինի բլուրի գագաթին հասնում է մինչև 10—12 մ և շատ հարուստ է տարբեր դարաշրջանների պատկանող նյութական մշակույթի մնացորդներով, որոնք հետզհետե լույս աշխարհ են գալիս ամեն տարի կատարվող պեղումների շնորհիվ։

Բացի Դվինի բլուրի վրա հնից սկսած մինչև մեր դարաշրջանի XIII դարը հերթականությամբ իրար վրա նստած հողաշերտերից, բլուրի շրջակայքում և ավելի հեռուներում երբեմն-երբեմն ի հայտ են գալիս տարբեր դարաշրջանների պատկանող հին դամբարաններ, որտեղ իրենց ննջեցյալներին են թաղել Դվինի հին բնակիչները՝ ժամանակի սովորությունների և թաղման ծեսերի համաձայն։

Այսպես, 1952 թ. Դվինի բլուրից արևելք, մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա, դեպի հարավ հոսող առվի հունի տակ, մոտ 5—6 մ խորության մեջ բացվեցին բրոնզեդարյան և վաղ երկաթեդարյան քարարկղյա դամբարաններ, որոնց մեջ գտնվեցին բրոնզե երկարավուն և սլացիկ սնամեջ կոթառով նիզակներ։

1971 թ. Վերին Արտաշատ գյուղից արևելք, առվի հեղեղատի մեջ բացվեցին երկաթեդարյան դամբարաններ, որոնց մեջ գտնվեցին բրոնզե իրեր և երկաթե առարկաներ։

1973 թ. դեկտեմբերին Դվինի բլուրից արևելք, Այգեզարդ գյուղի սահմաններում, դարձյալ առվի հունի մեջ բացվեց մեր թվականության առաջին երկու դարերին պատկանող կարասյա թաղում։

1940-ական թթ. Դվինի կենտրոնական թաղում, Կաթողիկե եկեղեցու տակ և կաթողիկոսարանի մոտերքում բացվեցին դարձյալ նույն ժամանակներին պատկանող կարասյա թաղումներ[1]։ Հայտնի էին նաև Դվինում գտնված հեթանոսական մշակույթի մի քանի մնացորդներ, որոնք քաղաքի տարբեր վայրերի պեղումների ժամանակ և նրանցից էլ առաջ ի հայտ էին եկել միջնադարյան շերտերում՝ ջարդոտված և իբրև հասարակ քար օգտագործված հետագա դարերի պատերի մեջ։ Դրանք մեծ մասամբ մարդկային գլուխներ էին, որոնց ժամանակը հնարավոր է ճշտությամբ որոշել, քանի որ սաղավարտների և գլխարկների ձևերը հայտնի էին հին դրամների վրա եղած դրոշմներից և թվագրվում են մ. թ. ա. II և I, ինչպես նաև մ. թ. I և II դդ., այսինքն՝ քրիստոնեություն ընդունելուց առաջ, քանի որ քրիստոնեությունը մարդկային արձանները համարում է կռապաշտություն և, ինչպես հայտնի է մատենագիր-

---

1 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները. Երևան, 1952, էջ 82—84։

ների երկերից, բոլոր արձանները քրիստոնեության մուտքի ժամանակ ոչընչացվել են։

Ագաթանգեղոսը նշում է, որ Տրդատ թագավորը, Գրիգոր Լուսավորչի առաջնորդությամբ, զենքի ուժով ոչնչացրել է Հայաստանի հեթանոսական մեհյանները և նրանց տեղ հիմնել քրիստոնեական տաճարներ։ Նա գրում է. «Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբագինսն Անահտական դիցն, և որ յԵրազամոյն տեղիսն անուանեալ կայր։ Նախ դիպեալ ի Ճանապարհի երազացոյց հրազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրմաց, անուանեալ Դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին»[2]։ Այնուհետև Ագաթանգեղոսը շարունակում է, որ բոլորը «ի զէն և ի զարդ վառեալք, մեծաւ գոչմամբ զաղաղակ հարեալ՝ փախստեայք յԱնահտական մեհենանն անկանէին, ուստի ընդ հասեալսն մարտ եղեալ կուէին. նէտս անոյժս քարավէժս թանձրատարափս ի վերուստ ի շինուածոցն ի խոնարհ զմարդկաւն ցնդէին. զորս և սակաւ մի զարհուրեցուցեալ, զնորահաւատ մարդիկն...։ Եւ զդաստակերտսն և զսպասաւորսն քրմօքն հանդերձ և, նոցին գետովքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան»[3]։ Ամեն տեղ, ուր գնում էին, հեթանոսական տաճարները քանդում էին և քրիստոնեություն էին հաստատում։ Պատմագրի խոսքերով, Լուսավորիչը «...զամենեսեան ի տեառնն Ճանապարհի կացուցանէր»[4], ...«երթայր հասանէր ի Դարանաղեաց գաւառն... ի գեօղն Թորդան, մեհեան անուանեալ սպիտակափառ դիցն, Բարշամինայ. նախ գնա կործանէին, և զպատկեր նորին փշրէին և զգանձսն ամենայն, զոսկւոյն և զարծաթոյն աւար հարկանէին և զայն աղքատաց բաժանեալ բաշխէին։ Եւ գեօղն... յանուն եկեղեցւոյն նուիրէին»[5], «...ապա երթեալ հասանէր յամուր տեղին անուանեալ Անի ի թագաւորաբնակ կայանսն հանգստոցած գերեզմանաց թագաւորացն Հայոց։ Եւ անդ կործանեցին զբագինն Զեւս դիցն Արամազդայ, հօրն անուանեալ դիցն ամենայնի։ Եւ անդ կանգնեալ զտէրունական նըշանն... ի ծառայութիւն եկեղեցւոյն նուիրէին»[6]։

Գրիգոր Լուսավորչին և Տրդատ թագավորին ուժեղ դիմադրություն են ցույց տվել Եկեղյաց գավառում, երբ նրանք գնացել են քանդելու Անահիտի մեծ տաճարը։ Ագաթանգեղոսը գրում է. «Եւ ապա... գաւառն Եկեղեաց ելանէր։ Եւ անդ երևեալ դիւացն ի մեծ և ի բուն մեհենացն Հայոց թագաւորացն, ի տեղիս պաշտամանցն, յԱնահտական մեհենին, յԵրէզն աւանի, ուր ի նմանութիւն վահանաւոր զօրու ժողովեալ դիւացն մարտնչէին, և մեծագոչ բարբառով զլերինս հնչեցուցանէին։ Որք փախստական եղեալք, և ընդ փախչելն նոցա կործանեալ բարձրաբերձ պարիսպքն հարթեցան։ Եւ որք դիմեալ հասեալ էին զդաստացեալ զօրօքն, սուրբն Գրիգոր թագաւորաւն հանդերձ, փշրէին զոսկի պատկերն Անահտական կանացի դիցն և ամենեին զտեղին քանդեալ վատնէին, և զոսկին և զարծաթն աւար առեալ»[7]... «Եւ անտի ընդ գետն Դայլ

2 Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 395։
3 Նույն տեղում, էջ 395—397։
4 Նույն տեղում, էջ 397։
5 Նույն տեղում, էջ 398։
6 Նույն տեղում, էջ 399։
7 Նույն տեղում, էջ 399-400։

յանկոյս անցանէին և քանդէին զնանէական մեհեանն դստերն Արամազդայ ի Թիլն աւանի։ Եւ զգանձս երկոցուն մեհենացն աւարեալ ժողովեալ ի նուէր սպասուց սուրբ եկեղեցւոյն աստուծոյ թողուին տեղեօքն հանդերձ»[8]։

Նույն ավերածությանն են ենթարկել նաև Միհր աստծո մեհյանը։ Այդ մասին Ագաթանգեղոսը գրում է, որ Գրիգոր Պահլավունին «գայր հասանէր ի Մրհական մեհեանն անուանեալ որդւոյն Արամազդայ, ի գիւղն զոր Բագայարիճն կոչեն ըստ պարթեւարէն լեզուին։ Եւ զայն ի հիմանց բրեալ խլէին, և զգանձսն մթերեալս աւար հարկանէին և աղքատաց բաշխէին և զտեղիսն նուիրէին եկեղեցւոյ»[9]։

Նկ. 1

Գրիգոր Պահլավունին Կեսարիայում եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո, վերադարձի ճանապարհին՝ «Եհաս ի սահմանս Հայոց լուաւ Գրիգորիոս, թէ Վահեվանեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ, մեհեանն մեծագանձ, լի ոսկւով և արծաթով, և բազում նուէրք մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդ. ութերորդ պաշտօն հռչակաւոր, անուանեալն Վիշապաքաղն Վահագնի, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց, ի սնարս լերինն Քարքեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի մեծի լերինն Տաւրոսի, որ և անուանեալ ըստ յաճախաշատ պաշտաման տեղեացն՝ Յաշտիշատ։ Զի յայնժամ դեռ ևս շէն կային երեք բագինք ի նմա. առաջին՝ մեհեանն Վահեվանեան, երկրորդն՝ Ոսկեմոր Ոսկեծին դից... և երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղկան դից, Սենեակ Վահագնի կարդացեալ, որ է ըստ յունականին Ափրոդիտէս»[10]։ Գալիս է Գրիգոր Պահլավունին իր մեծ շքախմբով և քանդում է այդ տաճարները ևս, որոնք մինչ այդ անաղարտ էին մնացել։

Այս բոլոր տեղեկությունները մեզ հայտնի էին մատենագիրներից։ Վերջին տարիները հայտնի դարձան նաև Արտաշատի պեղումներից, որտեղ ի հայտ եկան աստվածների մարմարյա նրբաքանդակ արձաններ, բայց կոտրատված վիճակում։ Նման արձան գտնվել է նաև Գառնի ամրոցի պեղումների ժամանակ։

Դվինի պեղումները պարզեցին, որ Գրիգոր Պահլավունին ու Տրդատ թագավորը քրիստոնեության մուտքի ժամանակ ոչնչացրել ու կործանել են ոչ միայն մեհյաններն ու հեթանոսական տաճարները՝ իրենց ոսկեձույլ և մար-

8 Նույն տեղում, էջ 400։

9 Նույն տեղում, էջ 401—402։

10 Նույն տեղում, էջ 410—411։

մարակերտ արձաններով, այլև հեթանոսական դարաշրջանի բոլոր գերեզմանոցները՝ իրենց արձաններով ու կոթողներով, որոնք տեղական (ժողովրդական) արվեստի արտահայտություններ են եղել և մեհյանների աստվածությունների հետ ոչ մի առնչություն չեն ունեցել։ Դրանք եղել են հասարակ մարդկանց գերեզմանական արձաններ, բայց հետաքրքիր են իրենց արտահայտած գաղափարներով և հասկացություններով (տե՛ս նկ. 1)։

Այդ տեսակետից երջանիկ պատահականության արդյունք կարելի է համարել 1969 թ. խիստ արժեքավոր գյուտերը։ Այդ թվականի գարնանը Ներքին Դվին գյուղի կոլտնտեսությունը իր ցանքատարածություններն ընդարձակելու նպատակով անօգտագործելի բարձունքները հարթել էր և Հողաբերդ կոչվող փոքրիկ գյուղակի մոտ ի հայտ էր բերել մի երկու տասնյակի չափ մշակած և մի քանիսն էլ քանդակված քարեր, որոնք պատկանում էին մ. թ. ա. III—մ. թ. III դարերին, երբ հայերը դեռևս քրիստոնեություն չէին ընդունել։ Տեղում մեր կատարած ուսումնասիրությունները պարզեցին, որ այդտեղ եղել են հեթանոսական դամբարաններ, բայց բոլորն էլ շատ հնում քանդվել են ու ավերվել։

Դամբարանները հնում ունեցել են նաև ննջեցյալների հետ թաղված իրեր՝ անձնական զենք ու զարդարանք, կերակուրի կավանոթներ և այլ առարկաներ, բայց դամբարանները հնում քանդելու և ավերելու ժամանակ իրերը, մանավանդ մետաղե առարկաները, կողոպտել են։ Այնուամենայնիվ այնտեղ գտնվեցին կողոպտիչների աչքից վրիպած մետաղե մի քանի առարկաներ և կավամաններ։ Գտնված առարկաներից մեկը բրոնզե օձագլուխ ապարանջան է, մյուսը՝ ծայրերը կեռացրած բրոնզե ոլորուն մանյակ։ Եղել են նաև այլ առարկաներ, որոնք մեր ձեռքը չեն հասել։ Շատ են եղել կավանոթները, բոլորն էլ սև կամ մոխրագույն արտաքինով, որոնց բեկորները (հին ու նոր կոտրվածքի հետքերով) ցրված են ամբողջ տեղամասի տարածության վրա։ Կոլտնտեսականները ամբողջական վիճակում կարողացել են գտնել միայն երկու միանման կճուճ, որոնք ունեն թեք փոսիկներից կազմված զարդագոտիներ։ Կավանոթների ցրիվ եկած բեկորներից երևում է, որ դրանք մեծ տարողություն չեն ունեցել և դրված են եղել դամբարանների մեջ։

Այստեղ ցավալին այն է, որ իբրև ժամանակը որոշող հանգամանք ծառայում են միայն դամբարանների վրա դրված, այսպես կոչված սեմական նշանները, իսկ գերեզմանական առարկաները շատ ընդհանուր են և նրանցով անհնարին է որոշել դամբարանների ճիշտ ժամանակը։ Հարցն այն է, որ կենցաղում գործածվող առարկաները և դամբարանի մեջ դրվող իրերը կարող են իրարից տարբեր լինել։ Կենցաղում մարդիկ գործ են ածում այն ամենը, ինչը որ նպատակահարմար է տվյալ ժամանակի համար, իսկ դամբարանի մեջ դնում են այնպիսի իրեր, որոնք ննջեցյալի հետ թաղելը վաղուց ի վեր սովորություն է դարձել, այդ պատճառով դամբարանային նյութի հիման վրա դժվար է նրանց ճիշտ թվագրումը։ Դամբարանի հետ զուգահեռ կերպով անհրաժեշտ է որոնել և գտնել այն բնակավայրը, որի ննջեցյալները թաղվել են տվյալ գերեզմանոցում։ Այդ երկու տարբեր տիպի նյութերի համատեղ ուսումնասիրությունից հետո միայն կարելի կլինի որոշել դարն ու դարաշրջանը[11]։

[11] Կ. Ղաֆադարյան, Դամբարանների պեղումներ Կիրովականում, «Տեղեկագիր» ԱրմՖԱՆ-ի, 1941, № 3—4, էջ 67։

Կարծում ենք, որ անձնական գույք պարունակող բոլոր դամբարանները անխտիր կերպով բրոնզի դարին կամ երկաթի դարի սկզբներին վերագրելը, ինչպես անում են հնագետներից ոմանք, սխալ է։ Օրինակ, Կիրակոս Գանձակեցու պատմությունից պարզվում է, որ մ. թ. XIII դարում անգամ Հայաստանում այդպիսի թաղումներ տեղի են ունեցել մոնղոլ-թուրքերի կողմից։ Նա գրում է. «Եւ յօրժամ ոք մեռանէր ի նոցանէ, կամ սպանանէին, էր զոր բազում աւուրս շրջեցուցանէին... էր զոր այրէին. և զկէս թաղէին յերկրի խոր փոսիւք, և ընդ նմին դնէին զզէնն և զհանդերձ, և զոսկի և զարծաթ, որ ինչ բաժին իւր էր։ Եւ թէ ի մեծաց ոք լինէր, ի ծառայից և յաղախնաց ևս դնէին ընդ նմա ի գերեզմանի, զի սպաս կալցի ասէին նմա. այլ և ձիս, զի ասէին անդ պատերազմ սաստիկ լինել»[12]։ Նշանակում է, անձնական գույքը բոլորի հետ են թաղել, իսկ եթե մեծամեծ է եղել և ունեցել է ձի, սպասավորներ ու հարճեր, դրանք ևս գրել են իրենց տիրոջ գերեզմանի մեջ, ինչպես որ ընդունված էր դարեր առաջ Հայաստանի բնիկների մեջ։ Ջնայած միջնադարյան այդպիսի գերեզմաններ մինչև այժմ հայտնի չեն Հայաստանում, բայց կարող են բացվել հետագա պեղումների ժամանակ, կամ պատահականորեն։

Բացի այդ, հայտնի է, որ Հայաստանում մինչև X դարը, գուցե և ավելի ուշ, գոյություն են ունեցել դեռևս հեթանոսական կրոնը պահպանած համայնքներ, որոնք, անշուշտ, իրենց ննջեցյալներին թաղել են հեթանոսական ծեսերով։ Քրիստոնյա եկեղեցին անհաշտ պայքար է մղել հեթանոսության դեմ ոչ միայն քրիստոնեության սկզբներին, այլև հետագա դարերում, ամեն կերպ աշխատելով արմատախիլ անել հեթանոսական ծեսերն ու սովորությունները։

Դեռևս IV դարում հայոց սպարապետ Մանվել Մամիկոնյանը Ներսես Պարթևի (353—373) մասին ասում է, որ նա «զաշխար» կամ զկոծ դնել մեռելոց՝ դառն մեղս համարէր... զի յաւուրս նորա ոչ որ իշխէր գնել կոծ կամ աշխարանս. այլ յետ մահու նորա անմիտ մարդիկ համարձակեցան զայս գործել»։ Ուրեմն՝ նա խստիվ արգելել էր մեռելների վրա դրվող հեթանոսական լաց ու կոծը։ Այնուհետև Մանվել Մամիկոնյանը խոսքը մասնավորելով իր մասին, հայոց թագավոր Արշակի, նրա կնոջ՝ Հայկանդուխտ թագուհու և բազմաթիվ իշխան-իշխանուհիների ներկայությամբ ասում է՝ «Այլ վասն իմ ոք, կոծ մի՛ դիցէ, եթէ դնէ ոք, նա լիցի դատապարտ»[13]։

Լաց ու կոծի արգելքի վերաբերյալ մեկից ավելի կանոններ են հորինվել եկեղեցու հայրերի կողմից։ Դեռևս քրիստոնեության սկզբին, Գրիգոր Լուսավորչին (302—335) վերագրվող կանոնների մեջ կարդում ենք. «Որք կոծ դնեն և զհերս խլեն և կամ զձակատ հարկանեն՝ նզովեալ լիցին ի կեանս և ի մահ»[14]։ Աթանաս Աղեքսանդրացու կանոններից երևում է, որ կոծ դնողներն իրենց ճակատին խփում էին և արյուն հանում. «Հեթանոսաբար ճակատ հարկանել, արիւն հանել»[15]։ Սահակ Պարթևին (387—436) վերագրվող կանոնների մեջ ասված է. «Աշխար ի վերայ մեռելոյ մի ոք առցէ, քանզի դիւական են ամենայն

12 «Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1910, էջ 259։

13 «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 385։

14 «Կանոնագիրք Հայոց», Ա, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 247։

15 Նույն տեղում, էջ 305։

այնպիսի իրք. ապա եթէ իցէ ոք և անհնազանդեալ արասցեն՝ պարտական եղիցին ապաշխարութեան առ դուրս սուրբ եկեղեցւոյն»[16]։ Աշխարելու և կոծ դնելու մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում պատմահայր Մովսես Խորենացին։ Նկարագրելով Արտաշես Ա-ի մահն ու թաղումը, նա գրում է. «Եթէ որչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք և հարճք և մտերիմ ծառայք և որպիսի շուք բազմադիմիս արարին առ ի պատիւ դիոյն քաղաքականաց կարգօք և ոչ որպէս զբարբարոսս»[17]։ Նշանակում է՝ հեթանոս Հայաստանում ննջեցյալների վրա կատարվող լացն ու կոծը, ինչպես նաև կանանց, հարճերի և ծառաների սպանությունները կատարվել են թաղման ծեսերի և ընդունված կանոնների համաձայն, բայց, ինչպես նշում է Խորենացին, գոյություն է ունեցել նաև թաղման «բարբարոսական» եղանակ, երբ դուրս են եկել ընդունված ծեսերի սահմաններից։

* * *

1969 թ. Ներքին Դվին գյուղի սահմաններում գտնված հեթանոսական առարկաների մեջ կար մի ֆալլոս։ Ինչպես բոլոր իրերը, այնպես էլ այս ֆալլոսը, գտնվել է տեղահան եղած վիճակում, այդ պատճառով էլ չգիտենք, թե նա որտեղ է եղել կանգնած, բայց կարծում ենք, որ սա ևս գերեզմանի վրա է դրվել և հավանաբար ոչ հասարակ մարդու վրա, այլ տոհմապետի, որից առաջ են եկել գերդաստանի կամ տոհմի անդամները։ Հայաստանում շատ են գտնվել ֆալլոսներ, ոչ միայն Դվինում, այլև շատ այլ տեղերում։ Նրա պաշտամունքը տարածված է եղել Արարատյան դաշտավայրում, Արագածոտնում, Կոտայքում և այլուր։

1969 թ. հայտնաբերված հեթանոսական առարկաների մեջ բացառիկ տեղ ունի տուֆ քարից կերտած կնոջ մի արձան, որի դեմքը, ոտքերը, կուրծքը ջարդոտել են, բայց մարմնի վրա ցայտուն կերպով դրսևորված են մերկանդամ կնոջ սեռական հատկանիշները։ Հայտնի է, որ հեթանոսական Հայաստանի աստվածների պանթեոնում իր հատուկ տեղն է ունեցել Աստղիկ դիցուհին, որի զլխավոր տաճարը գտնվելիս է եղել Տարոնում։ Ագաթանգեղոսի ասելով քրիստոնեություն ընդունելուց հետո էլ «տգետ մարդիկ» այդ տաճարն էին գնում խառնակության համար։ Գրիգոր Լուսավորիչը հայոց 16 մեծ իշխանների և նրանց սպառազեն զորքի ուղեկցությամբ Կեսարիայից վերադարձի ժամանակ մտնում է Տարոն, այնտեղ գոյություն ունեցող հեթանոսական երեք մեծ տաճարները փակելու։ Դրանցից առաջինը Վահե Վանյան տաճարն էր, երկրորդը՝ «Ոսկեմոր-Ոսկեծին դից» մեհյանը և «երրորդ մեհեանն անուանեալ Աստղկան դից... որ է ըստ յունականին Ափրոդիտէս։ Արդ՝ դիմեաց զալ սուրբն Գրիգորիոս, զի բանդեսցէ և զայն ևս, զի տակաւին իսկ տգետ մարդիկ խառնակութեան զոհէին։ յայս բազինս մնացեալս»[18]։

Այդ հաշվի առնելով հանդերձ, մենք այն կարծիքին ենք, որ Դվինում գտնված մերկանդամ կնոջ արձանը ոչ թե դիցուհի է պատկերել, այլ պատկանել է իրական անձի, տոհմի կամ գերդաստանի նախամոր, որից սերվել են նրանց բազմանդամ ընտանիքները, ինչպիսին է նաև ֆալլոսի արձան ունեցող

16 Նույն տեղում, էջ 385։
17 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 190։
18 Ագաթանղեղոս, էջ 411։

տոհմապետը։ Դրանցից մեկը արական հատկանիշ ունեցող տոհմապետն է, մյուսը՝ իգական հատկանիշ ունեցող մեծ մայրը։ Որ երկրորդ դամբարանի տերը հասարակ կին չէ, այդ երևում է այն բանից, որ նույն գերեզմանոցում գտնվել են կանացի երկու արձաններ ևս։ Նրանցից մեկը շորերով է և վզին ունի մի քանի շար ուլունքներ։ Գլուխը ջարդել են (քրիստոնեություն ընդունելու ժամանակ) և տեղահան արել (նկ. 2)։



Նկ. 2

Նույն տեղում գտնված է կնոջ մի այլ արձան, որի գլուխը պոկված է և մարմինը վնասված։ Այս կնոջ ձեռքերը ծալված են կրծքի վրա, մերկ է և ստորին մասն անմշակ, որից երևում է, որ այդ մասով նա թաղված է եղել գետնի մեջ։ Այս արձանի սեռական հատկանիշները չեն ցույց տրված, հավանաբար այն պատճառով, որ նա տոհմի նախամայր չի համարվել (նկ. 3)։

Հայաստանում կինը չի ստրկացվել ո՛չ ստրկատիրական կարգերի օրով, երբ կային անգամ կին աստվածներ (Անահիտ, Աստղիկ, Նանե) և ո՛չ էլ միջին դարերում, ավատական կարգերի օրով, երբ կինն անգամ շինարարական աշխատանքների և նվիրատվությունների մեջ հանդես է գալիս իբրև բարեգործ՝ իր ամուսնու կամ հոր և եղբայրների հետ հավասար կերպով։ Երբ նրանց հիշատակին կամ արևշատության համար եկեղեցիներում պատարագ է մատուցվում։ Ստրկատիրական կարգերի օրով իբրև այր և կնոջ դաշինքի օրինակ կարող է ծառայել 1969 թ. ներքին Դվինում գտնված քանդակազարդ այն քարը, որը դամբարանի ներսում դրված է եղել իբրև զարդարանք։ Այդ քարի վրա պատկերված են տղամարդն ու կինը իրար կողքի կանգնած և իրար ձեռք բռնած վիճակում, որ նրանց միասնությունն ու սիրո դաշինքն է ազդարարում։

Նկ. 3



Նկ. 4

Իսկ այդ քարը գտնվել է տեղահանված վիճակում, բայց շարքի մեջ դրված քար է եղել և անկասկած դամբարանային կառուցվածքի ներսում է գտնվել (նկ. 4)։ Նման կառուցվածքի օրինակ կարող է ծառայել Աղցի դամբարանը, որը պարունակում է Արշակունի հայ թագավորների տեղատան արված աճյունները։

Ինչպես Աղցում, այնպես էլ Ներքին Դվինի գերեզմանոցում կան որսի տեսարան պատկերող քանդակաքարեր։ Ներքին Դվինի քարերից մեկի վրա մի մարդ նիզակով սպանում է հաստ պոչ ունեցող մի գազանի, մի այլ քարի վրա երևում են վայրի երկու այծեր. հավանաբար որսորդներին քանդակած են եղել այլ քարի վրա, որը մեզ չի հասել։

Աղցում կնոջ և այր մարդու դաշինքի պատկեր չկա և չէր էլ կարող լինել, որովհետև այդ դամբարանում խառը վիճակում ամփոփված են քրիստոնյա և հեթանոս Արշակունի հայ թագավորների ու իշխանների աճյունները, իսկ քրիստոնեության դարաշրջանում արգելված էր մարդկանց պատկերներով հեթանոսական կոթողներ կանգնեցնել։

1969 թ. Ներքին Դվին գյուղում բացված հեթանոսական դամբարանային բարձրաքանդակները, որոնք սերտորեն կապված են հեթանոս հայերի հավատալիքների հետ, բացառիկ տեղ ունեն իրենց ժամանակի մշակույթի և արվեստի պատմության համար։ Այդ արժեքն ավելի է մեծանում, երբ հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ քանդակների մեջ չի նկատվում բարձր խավերում իշխող հելլենիստական մշակույթի ազդեցությունը, որ նրանց արվեստը զարգացել է ու դրսևորվել ժողովրդի լայն խավերի մեջ։

ЯЗЫЧЕСКИЕ ПОГРЕБЕНИЯ ИЗ ДВИНА

Проф. К. Г. КАФАДАРЯН

(Резюме)

В 1969 г. при раскопках Двина были обнаружены надгробные памятники последних веков дохристианского периода в Армении (III в. до н. э.—III в. н. э.). В числе найденных предметов — фаллос, статуи женщин (из которых одна нагая), каменные разбитые головы мужчин и женщин, два рельефа со сценой охоты, одна плита с изображением мужчины и женщины с соединенными руками — олицетворение союза мужчины с женщиной.

По свидетельству армянских авторов V в. (Агатангехос, Хоренаци, Бузанд), все языческие храмы Армении и скульптурные изображения людей были уничтожены армянскими войсками царя Трдата III в период принятия христианской веры в начале IV в. Уцелевшие предметы, найденные на территории средневековой столицы Армении Двина, являются образцами самобытной местной культуры и связаны с обычаями и ритуалами местного населения.

---

[10] Այս կապակցությամբ տե՛ս Խորենացի, գիրք Գ, գլուխ ԻԷ, էջ 288—289։